

րեն՝ անկատար (թերի) բանաւոր Էակներ: Մարդը, անկասկած, կը նկատուի անկատար բանաւոր Էակ: Կատարեալներու մօտ *բարի կամքը* յառաջ կու գայ միայն բանականութենէն եւ իրենց վարմունքները բարոյապէս միշտ *բարի* են: Այլ խօսքով, մարդու կամքը *բարի* ըլլալու համար, պէտք չէ յառաջացած ըլլայ բացասական հակումներէն, այլ միայն ու միայն՝ պարտաւորութեան գիտակցութենէն, որ զուտ բանականութեան արդիւնքն է:

2. Ի՞նչ է՝ պարտաւորութիւնը

Ինչպէս այս տեսութեան սկիզբը նշեցինք, Կանտի պարտագիտական բարոյագիտութիւնը հիմնուած է միայն պարտաւորութենէն բխող վարմունքներու վրայ: Այլ խօսքով, պարտագիտական բարոյագիտութիւնը կը խուսափի որեւէ ենթակայականութենէ (Subjectivity). այսինքն՝ մարդիկ, առանց բացառութեան պիտի վարուին նոյն բարոյական պարտաւորութեամբ: Պարտաւորութիւն մը, որ Կանտի համաձայն, կը բխի *բարոյական օրէնքէն* (գերմ.՝ Sittengesetz, անգլ.՝ Moral Law – Moral Absolutism). իսկ այս *օրէնքը* ի զօրու է, հաւասարապէս բոլոր բանաւոր Էակներու համար, նպատակ ունենալով՝ բարոյական վարմունքները: Բարոյական այս օրէնքին հանդէպ յարգանքը (գերմ.՝ Achtung, Respekt, անգլ.՝ Respect) բարձրագոյն պահանջք մըն է: Բանաւոր Էակներ այս օրէնքին գիտակցաբար եւ հարկադրաբար չէ որ կ'անսան, այլեւ իրենց կամքն է, որ անպայմանօրէն եւ ուզելով կը հնազանդի այս օրէնքին: Մարդոց կամքը, սակայն, յառաջ կու գայ (ինչպէս նշեցինք) բանականութենէն եւ զանազան հակումներէն. հակումներ, որոնք կրնան դրական ազդեցութեամբ՝ բարոյական *լաւ ու բարի* վարմունքներու պատճառ դառնալ կամ բացասական ազդեցութիւն գործել եւ *վատ ու չար* վարմունքներու տեղի տալ:

Կանտ, աւելի յառաջ երթալով տակաւին կը զանազանէ բարոյական *օրէնքին համաձայն* վարմունքին եւ բարոյական *օրէնքէն բխած* վարմունքին միջեւ: Պատճառը շատ պարզ է, որովհետեւ օրէնքին հետ համաձայնութիւն մը կրնայ պատահական կամ կասկածելի ըլլալ: Այս գաղափարը յստակացնելու համար վերստին յիշենք, որ մարդկային հակումները կրնան դրական կամ բացասական ազդեցութիւն ունենալ եւ ըստայնմ *բարի* կամ *չար* վարմունքներ յառաջանալ: Ուրեմն հակումներէ մղուած վարմունքները, որոնք բարոյական *օրէնքին համաձայն* են, նաեւ կը կոչուին՝ *պարտաւորութեան համաձայն* վարմունքներ. իսկ ուղղակի բարի կամքէն յառաջացած վարմունքները, նաեւ կը կոչուին՝ *պարտաւորութենէն բխած* վարմունքներ: Այս վերջինները բարոյականօրէն շատ աւելի արժէքաւոր են, որովհետեւ անոնցմէ միշտ «բարոյական ճիշդ» վարմունքներ կը յառաջանան:

Նոյնինքն Կանտի օրինակը դարձեալ յիշելով, կարելի է յստակացնել այս գաղափարը: Բարեգործութիւնը ընկերութեան մէջ ձգտելի ու գնահատելի արարք կամ պարտաւորութիւն մըն է: Շատեր բարեգործութիւն կ'ընեն՝ *պարտաւորութեան համաձայն*. ասիկա թէեւ սիրալիր, գովելի ու քաջալերելի